

# Երկու տողում մի պոլինոմ

Պոլինոմը տառերի հաջորդականություն է, որը երկու ուղղությամբ կարդալիս նույնն է, ինչպիսին է, օրինակ, MOM հաջորդականությունը: Տրված են s և t տողերը, պահանջվում է գտնել այն ամենաերկար պոլինոմի երկարությունը, որը հանդիպում է s և t տողերի ինչ-որ միահյուսման մեջ որպես անընդհատ ենթատող: Օրինակ, "AA" և "BB" բառերը կարելի է միահյուսել հետևյալ եղանակներով՝

AABB BBAA

ABAB BABA

ABBA BAAB

Սրանցից վերևի երկուսը պարունակում են 2 երկարությամբ պոլինոմներ, մեջտեղի երկուսը՝ 3 երկարությամբ պոլինոմներ, և ներքևի երկուսը՝ չորս երկարությամբ պոլինոմներ: Այսպիսով, պատասխանը կլինի 4:

Իսկ, օրինակ, AB և C բառերի հնարավոր միահյուսումները կլինեն հետևյալ 3-ը. CAB, ACB, ABC:

## Մուտքը

Առաջին տողում գրված է երկու թիվ՝ բառերի երկարությունները, որոնք մեծ կամ հավասար են զրոյից և չեն գերազանցում հիսունը: Հաջորդ երկու տողերում տրված են առաջին և երկրորդ բառերը, որոնք կազմված են միայն մեծատառերից:

## Ելքը

Պետք է արտածել մեկ թիվ՝ հնարավոր ամենաերկար պոլինոմի երկարությունը:

## Օրինակ

**Մուտքը.**

2 2

AA

BB

**Ելքը.**

4

**Մուտքը.**

0 4

JAVA

**Ելքը.**

3